# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

ԱՆԻՄԵԴ ՍՊԸ-ն ԻՀԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/46 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | մակնիշը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 1 | Պահարան Crash cart | Liaison Medical | Պահարան Crash cart | Anhui Liaison Medical Equipment Co., Ltd. | "«Արտակարգ և անհետաձգելի բժշկական օգնության սայլակ (Crash cart)» Այն պետք է նախատեսված լինի հաստատություններում անհետաձգելի բուժօգնության կազմակերպման համար։ Սայլակը պետք է պատրաստված լինի բարձրորակ, ամուր և հուսալի նյութերից, որոնք կապահովեն դրա անվտանգ և երկարատև շահագործումը։ Սայլակի բոլոր արտաքին և ներքին մակերեսները պետք է լինեն հարթ, հեշտ մաքրվող և դիմացկուն՝ բազմակի անգամ ախտահանիչ և մաքրող միջոցներով |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | մշակմանը։Սայլակը պետք է լինի շարժական, համալրված առնվազն 4 (չորս) անիվով, որոնցից նվազագույնը 2-ը՝ արգելակային մեխանիզմով։ Կոնստրուկցիան պետք է ապահովի սայլակի կայունությունը և հեշտ տեղաշարժը շահագործման ընթացքում։Սայլակը պետք է ունենա առնվազն 5 (հինգ) դարակ՝ բժշկական պարագաների և դեղերի անվտանգ և դասավորված պահեստավորման համար։ Դարակները պետք է լինեն ամուր, հեշտ բացվող և փակվող։ Սայլակը պետք է ունենա կնքման (seal) հնարավորություն՝ պարունակության ամբողջականության վերահսկման նպատակով։ Սայլակի ընդհանուր չափերը պետք է ընտրվեն այնպես, որպեսզի ապահովեն դրա հարմար և անվտանգ շահագործումը բժշկական հաստատության պայմաններում։ Սայլակի բարձրությունը պետք է լինի ոչ պակաս, քան 90 սմ և ոչ ավելի, քան 110 սմ։ Լայնությունը պետք է լինի ոչ պակաս, քան 50 սմ և ոչ ավելի, քան 70 սմ։ Խորությունը պետք է լինի ոչ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | պակաս, քան 45 սմ և ոչ ավելի, քան 60 սմ։ Թույլատրվում են համարժեք չափեր՝ չխախտելով սայլակի ֆունկցիոնալ նշանակությունը։ Սայլակի կոնստրուկցիան պետք է ապահովի առնվազն 100 կգ ընդհանուր բեռնվածության դիմակայունություն՝ ներառյալ դարակներում տեղադրված բժշկական պարագաները և սարքավորումները։ Յուրաքանչյուր դարակ պետք է նախատեսված լինի ոչ պակաս, քան 10–15 կգ բեռնվածության համար։ Սայլակի անիվները պետք է ապահովեն սահուն տեղաշարժ՝ ամբողջական բեռնվածության պայմաններում։ Սայլակը պետք է ապահովի բժշկական սարքավորումների (ներառյալ՝ դեֆիբրիլյատոր կամ մոնիթոր) տեղադրման կամ ամրացման հնարավորություն։ Կոնստրուկցիան պետք է լինի դիմացկուն՝ ինտենսիվ շահագործման պայմաններում։Ապրանքը պետք է լինի նոր, չօգտագործված։ Նախընտրելի գույնը՝ բաց մոխրագույն կամ այլ բաց գույն։ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | Վերջնական գույնը, արտաքին տեսքը, ձևը և որակը պետք է համաձայնեցվեն պատվիրատուի հետ։ Սայլակը պետք է ապահովված լինի առանձին տարաներով կամ պահոցներով՝ օգտագործված թափոնների, անհրաժեշտ փաստաթղթերի անվտանգ պահման համար։ Պահոցները պետք է լինեն ամուր, հեշտ մաքրվող և ախտահանման դիմացկուն, որպեսզի համապատասխանեն հիվանդանոցի հիգիենիկ և անվտանգության պահանջներին։ Սայլակի հետևի հատվածում պետք է լինի կոշտ, հարթ մակերես, նախատեսված սիրտ թոքայՍայլակի հետևի հատվածում պետք է լինի կոշտ, հարթ մակերես, նախատեսված սիրտ թոքային վերակենդանացման (CPR) իրականացման համար։ Սայլակը պետք է համալրված լինի բժշկական թթվածնի մատակարարման համակարգով, որը պետք է ներառի ստանդարտ բժշկական թթվածնի բալոնի (առնվազն 5–10 լ) ամրացման հատուկ հենակ կամ փակ ամրացման համակարգ՝ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | ապահով և կայուն ֆիքսմամբ, թթվածնի ճնշման կարգավորիչ (ռեդուկտոր) մանոմետրով` մուտքային և ելքային ճնշման ցուցիչներով, թթվածնի հոսքի կարգավորիչ հոսքի աստիճանական կարգավորման հնարավորությամբ, խոնավացուցիչ տարա ինչպես նաև թթվածնի ելքային միացման պորտ` դիմակների կամ այլ շնչառական պարագաների միացման համար:" |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ԱՆԻՄԵԴ ՍՊԸ в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԻՀԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/46 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | | |
|---|---|---|---|---|---|
| | фирменное наименование | товарный знак | марка | наименование производителя | технические характеристики |
| 1 | | | | | |